3705

1933

3 КЮП
Р-27

Вожатому уголка
пионер бюро при ЦК
ВЛКСМ Армении

010

2010

ЗКЮП
Г-27
6/6/54

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

Арм.
3-5321а
3-5321а

«ՊԻՈՆԵՐ ԿԱՆՉ»-Ի ՀԱՎԵԼՎԱԾ

# ԲԱՆԱՁԵՎԵՐ

ԸՆԴՈՒՆՎԱԾ ՀԱՄ. ԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻՆ ԿԻՑ ՄԱՆԿԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՊԼԵՆՈՒՄՈՒՄ — ԸՆԿԵՐՆԵՐ՝ ԶՈԼՈՏՈՒԽԻՆԻ, ԱՐԽԻՊՈՎԻ ՅԵՎ ԻՎԱՆՈՎԻ ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ ԱՌԹԻՎ

ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՄ. ԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԻՍՏՈՒՄ

Инв. № 21748
2001

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ

ՅԵՐԵՎԱՆ 1933 Թ.

## ՄԱՆԿԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏԲՅՈՒՐՈՅԻ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՃՌՈՇՈՒՄՆԵՐԸ—ԸՆԴՈՒՆՎԱԾ ԸՆԿ. ՋՈՍՏՈՒԽԻՆԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ.—

### «ՊԻՈՆԵՐ ԿՈԼԵԿՏԻՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՅԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ»

### 1.

Պիոներ կազմակերպության աշխատանքներն անբավարար են. անհատ պիոներների և ջոկատների խմբակների առողջ հարցասիրությանն ու գիտությանը, տեխնիկայի, կուլտուրայի ու հասարակական աշխատանքների բնագավառում նրանց հայտնաբերած ձգտումները՝ շատ դեպքերում արձագանք չեն գտնում և օժանդակություն չեն ստանում ողակի, կոլեկտիվի և նրանց ղեկավարների կողմից, այդպիսով շատ հաճախ կազմակերպությունից դուրս են իրենց ընթացքն ստանում այդ հարցերը:

Կոլեկտիվների և պիոներական բյուրոների գլխավոր մասը կոմյերիտական և չափահասների դանդաղ հասարակական կազմակերպությունների աշխատանքների ձևերն ու մեթոդները մեխանիկորեն փոխադրելով պիոներ կազմակերպության աշխատանքներում — այդպիսով մանկական ինքնագործունեության և նախաձեռնության հիման վրա աշխատող մանկական կազմակերպությունը դարձնում են կազմակերպություն մանուկների համար:

### 2.

Պլենումը գտնում է, որ մանուկների նախաձեռնության և ինքնագործունեության մաքսիմալ զարգացումը՝ կոլվարների փորձված ու գիտակից ղեկավարությամբ, նրանց (մանուկների) հանրային քաղաքական և կուլտուրական առողջ պահանջների բավարարումը՝ կազմակերպության հիմնական խնդիրների կատարման նպատակով — պայքար գիտելիքների, ուսման ու դիսցիպլինայի համար — պետք է դառնա ողակի ու կոլեկտիվի աշխատանքների առանցքը:

Պլենումն անհրաժեշտ է համարում.

ա) Պիոներ կոլեկտիվների նախաձեռնությամբ լայն կերպով ծավալել զանազան խմբակների ցանցը (ռադիոներ, էլեկտրոտեխնիկներ, փորձարարներ, ավիոմոդելիստներ, ճագարաբույծներ և այլն), ներգրավելով՝ ըստ իրենց ձգտումների ու ցանկությունների պիոներների ու դպրոցականների լայն մասսաները:

Խմբակների ղեկավարման համար ներգրավել բանվորների, ուսուցիչների, մասնագետների և հատկապես կոմյերիտականների փորձված կադրերին, ինչպես նաև մեծահասակ տղաների շարքերից՝ փորձված պիոներներին:

Զուգահեռությունից խուսափելու համար սահմանել ընդհանուր կանոն, որ խմբակները կազմակերպվում են դպրոցի հետ միասին, սակայն պիոներ կոլեկտիվներին կից՝ պիոներ կազմակերպության ղեկավարությամբ:

բ) Կոլեկտիվների, հատկապես ողակների աշխատանքներում մտցնել գիտության, տեխնիկայի ու կուլտուրայի բնագավառից յերեխաներին հետաքրքրող կենդանի պարապմունքներ (տեխնիկական հնարագիտության յերեկոներ, շրջագայություններ նորակառույց վայրերում, բնական հարստությունների հետազոտում, ինքնագործ, գեղարվեստական ցերեկույթներ և այլն): Ողակն ու կոլեկտիվը պետք է մշտական օժանդակություն ցույց տան խմբակներին, նախաձեռնող խմբերին և անհատ պիոներներին:

գ) Մանկական կայանների ու բազաների հիմնական խնդիրը համարել անմիջական մեթոդական ու տեխնիկական օգնության համապատասխան խմբակներին, դպրոցներին, խմբերին և առանձին պիոներներին ու դպրոցականներին՝ մասսայական աշխատանքի և հրահանգիչների ու կազմակերպիչների կադրերի ամրացման միջոցով:

դ) Խմբակներին օժանդակելու նպատակով հանձնարարել Կենտբյուրոյին՝ շահագրգռված կազմակերպությունների հետ միասին՝ մեկ ամսվա ընթացքում մշակել տարբեր խմբակների համար օրինակելի ծրագրեր և պիոներների ու դպրոցականների աշխատանքների տարբեր ճյուղերի համար օրինակելի մինիմումներ, յելնելով յերեխաների տարիքային առանձնահատկություններից:

Մանկական մասսաների ակտիվության բարձրացման և սերունդների շարժման խրախուսման համար՝ առավելապես լավ աշխատող խմբերի ու խմբակների պարգևատրման դրությունը սահմանել լավագույն աշխատանք ցուցաբերող պիոներների ու դպրոցականների անհատական խրախուսումն, մշակելով այս սիստեմը Կենտբյուրոյում մեկ ամսվա ընթացքում:

### 3.

Կոլեկտիվ և ողակային հավաքույթների աշխուժացման և պիոներական դիսցիպլինայի ամրացման համար.

ա) Սահմանել, իբրև կանոն, որ կոլեկտիվի և ողակային հավաքույթներն առանց խաղի, յերգի, իսկ ֆիզկուլտուրայի ձևերն ու վայրերը բազմազան են լինելու—զբոսանք, էքսկուրսիա, դահուկախաղ և այլն: Հավաքույթներին անցկացնել խաղը տաքացնող խմբակների, խմբերի ու անհատ պիոներների յելույթներ, մրցման հրավիրելով հավաքույթներին ժամանցի լավագույն կազմակերպման համար:

բ) 1933 թ. հունվարին բոլոր կոլեկտիվներում հավաքույթներ կազմակերպել, բացատրելով յուրաքանչյուր պիոների համար պարտադիր օրենքների ու ձևականությունների կատարումը, մանավորապես ապահովելով այն, որ յուրաքանչյուր պիոներ մշտապես վզկապ կրի և հանդիպումների ժամանակ վողջույնի (բարևի):

գ) Պիոներ ակտիվի (ողակավար, փոխ ողակավար, կոլխորհրդի նախագահ և քարտուղար, խմբակավար և այլն) հետ սիստեմատիկ աշխատանք տանել, ուժեղացնելով կոլխորհրդի ղեկավար դերն՝ իբրև ողակների ու խմբակների աշխատանքների ամենօրյա հրահանգավորողի ու օժանդակության օրգանների: Պիոներ ակտիվի համար կազմակերպել սիստեմատիկ սեմինարներ ու դասընթացներ: 1933 թ. փետրվարին ամենուրեք անցկացնել





84728-Ա-Հ
1184-91

պիոներ ակտիվի վերընտրություն: Կազմակերպության մեջ աշխատանքի պատասխանատվությունը բարձրացնելու, լավագույններին խրախուսելու, նմանապես և պիոներ ակտիվի կադրերի լայն աճման համար պիոներ կազմակերպության մեջ սահմանել մանկակտիվի համար տարբերության նշանների սիստեմ,—ՄԿԿ Կենտբյուրոյին՝ մշակել այս սիստեմի իրագործումը մեկ ամսվա ընթացքում:

## 4.

Գիտելիքների տիրապետման համար պայքարը հաճախ կազմակերպությունները ձևականորեն են իրագործում, առանց դպրոցական աշխատանքին տիրապետելու: Կոլեկտիվների մեծ մասն իր գործունեությունը սահմանափակում է միայն կազմակերպչական մոմենտներով և ընդհանուր կոչով՝ պայքարելու ուսման վորակի համար:

Պիոներ կազմակերպության ամբողջ դպրոցական աշխատանքի հիմնական խնդիրը համարել.— առանձին առարկաների գիտելիքների տիրապետումը և պոլիտեխնիկ ուսուցման դրվածքը, յուրաքանչյուր առարկայի ավանդման մեթոդների կատարելագործումը, յերեխաների մեջ տվյալ գիտության նկատմամբ շահագրգռվածություն ըստեղծելը, գիտելիքների խորացումն ու մանկան շրջահայացքի լայնացումը՝ ինչպես դպրոցական, այնպես և արտադպրոցական աշխատանքների միջոցով: Պայքարը հանուն գիտական դիսցիպլինայի, հանուն կայուն սոցիալիստական կարգուկանոնի դըպրոցում: Խուլիգանության ու դպրոցական գույքի փչացման դեմ պայքարը պետք է առաջադրվի յուրաքանչյուր դպրոցականի ու պիոների՝ իբրև քաղաքական դաստիարակային խնդիր:

ա) Պարտադրել բոլոր կոլեկտիվներին, բազաներին ու բյուրոներին սիստեմատիկ աշխատանք տանել ուսման հարվածայինների հետ, խրախուսելով նրանց, ցուցադրելով նրանց իբրև որինակ մյուս պիոներներին ու դպրոցականներին, ձգտելով մյուսներին հավասարեցնել սրանց, ոժանդակելով այդ բանում: Սոցմրցման ծավալման հիմնական լոզունգն է լինելու—«վոչ մի պիոներ, վոչ մի դպրոցական անհատական մրցումից դուրս չի մնալու: Բոլորը դեպի ուսման հարվածայինների շարքերը»:

Ուսման հարվածայինը պետք է որինակելի լինի ուսման մեջ, հասարակական աշխատանքներում և իր վարքով: Ամբողջ միության մեջ մտցնել ուսման հարվածայինների միասնական չքանշան, վերացնելով մնացած բոլոր նշանները, վկայականները, տեղական կազմակերպությունների մանդատները և այլն. հանձնարարել Կենտբյուրոյին Լուսժողկոմատի հետ միասին մեկ ամսվա ըթացքում մշակել չքանշանի և պարգևվատրման խնդիրը:

բ) Մանկավարժների ղեկավարությամբ, ըստ առանձին դիսցիպլինների թույլ աշակերտների համար խմբակներ և ժամանակավոր բրիգադներ ստեղծելու պրակտիկան լայնելով, ինչպես նաև հետամնաց աշակերտներին անհատապես ուսման հարվածայիններին ամրացնելով, գըլխավոր ուշադրությունն ուղղել հետամացությունը կանխելուն՝ թույլ աշակերտներին ամենորյա ոգնության, կարիքավոր աշակերտների նյութական ոժանդակություն ցույց տալու գործին:

գ) 1933 թ. փետրվարին լայն կամպանիա անցկացնել պիոներների ու դպրոցականների անհատական պարտավորությունների և սոցմրցման պայմանագրերի կատարման ստուգման, պարգևվատրելով լավագույն կազմակերպություններին, դպրոցներին, խմբերին և ուսման լավագույն հարվածայիններին:

## 5.

Պլենումը նշում է, Համ. ԿԿ (բ) ԿԿ դիրեկտիվը «պիոներական կոլեկտիվների հասարակական աշխատանքների» մասին մի շարք կազմակերպություններ չեն հասկացել, գործնականում աղղակի խեղաթյուրել են այն, սահմանափակելով կոլեկտիվի վողջ աշխատանքը՝ բացառապես դպրոցի շրջանակներում:

Կոլեկտիվների հասարակական աշխատանքները պետք է ծավալվի ԺԱԿՏ-երում (բնակ. վարձակալական կոոպերատիվ տներ), բակերում, պուրակներում, գործարաններում, սովխոզներում, կոլխոզներում և պետք է ընթանա լուրջ դաստիարակչական աշխատանքով, կապ ունենա դպրոցի հանրային աշխատանքի հետ և իր հետևանքներով պետք է լայնացնի յերեխաների հասարակական-քաղաքական շրջահայացքը, նրանց դասակարգային կոփումը:

Հանձնարարել բոլոր կազմակերպություններին և Կենտ բյուրոյին ձեռք բերել հատուկ շենքեր բնակումբներում, ժակտերում, ժողտներում. խրճիթ-ընթերցարաններում՝ պիոներական կոլեկտիվների ամենորյա աշխատանքների համար:

Արտադպրոցական ցանցի (մանկկայաններ, ակումբ, բազա և այլն) աշխատանքների վորակի բարձրացման և չափահասների կուլտուր-քաղաքական հիմնարկների ցանցի կողմից մանուկների սիստեմատիկ սպասարկման պայքարին զուգընթաց, դպրոցը պետք է դարձնել մանուկների հետ տարվող կուլտուր-մասսայական աշխատանքների հիմնական կենտրոն, վորն ոգնելու յե պիոներ կազմակերպության՝ ինքնագործ կուլտուր-մասսայական ձեռնարկումների ծավալման գործում:

## 6.

Պլենումը պահանջում է կոմյերիտական բոլոր կազմակերպություններից անհապաղ իրագործել ՀԿԿ (բ) ԿԿ և ՀԼԿՅԵՄ 7-րդ կոնֆերանսի վորոշումը պիոներշարժման ղեկավարությունը բարելավելու, անհապաղ ապահովելով բոլոր կոլեկտիվները ղեկավարներով, կոլեկտիվների աշխատանքների բովանդակության ու կազմակերպման բոլոր մանրամասնությունների մեջ թափանցելով և վճռականորեն պայքարելով մանուկների միջև տարվող աշխատանքների ոպորտունիստական թերագնահատման դեմ:

Պլենումը պարտադրում է ՄԿԿ բոլոր բյուրոներին վճռականապես վերակառուցել իրենց աշխատանքները կազմակերպությունների ղեկավարման գործում, հիմնական խնդիր ցամարելով բազաների և կոլեկտիվների ղեկավարներին ոպերատիվ և մեթոդական կենդանի ոժանդակություն ցույց տալը:

## 7.

Բոլոր կազմակերպությունները պետք է մաքսիմալ չափով ուժեղացնեն իրենց բոլշևիկյան զգոնությունը աճող սերնդի կոմդաստիարակության ֆրոնտում, հատկապես դպրոցում, տանելով ամենավճռական, անխնա պայքար դասակարգային-թշնամական ազդեցությունների դեմ յերեխաների վրա, մոտ ապագայում իրագործելով Համ. ԿԿ (բ) ԿԿ և ԼԿՅԵՄ համամիութենական 7-րդ կոնֆերանսի վորոշումներում նշած բոլոր միջոցառումները մանուկների՝ լուրջ քաղաքական-դաստիարակչական աշխատանքների նկատմամբ:

## ՀԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻՆ ԿԻՑ Մ.Կ.Կ. ԿԵՆՏԲՅՈՒՐՈՅԻ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՃՌՈՇՈՒՄՆԵՐԸ.—ԸՆԴՈՒՆՎԱԾ ԸՆԿ. ԱՐԽԻՊՈՎԻ ԶԵԿՈՒՅՄԱՆ ԱՌԹԻՎ «ՊԻՈՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՄՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԳՅՈՒՂՈՒՄ»

Կ. Բ. պլենումը միանգամայն անբավարար է համարում պիոներ կազմակերպությունների աշխատանքի վիճակը գյուղում և այս բնագավառում կոմյերիտմիության բոլոր բջիջների ու կոմխմբերի ղեկավարությունը:

Պիոներ կազմակերպության աշխատանքները գյուղում ուժեղացնելու նպատակով անհրաժեշտ է.

### 1.

Մի ամսվա ընթացքում բոլոր պիոներ կոլեկտիվները բաժանել ողակների, կազմակերպել կոլխորհուրդներ: Անթույլատրելի համարել ողակավարների նշանակումն անձամբ՝ կոլեկտիվի խորհրդի կամ կոլվարի կողմից: Ողակավարն ընտրվում է ողակում՝ պիոներների կողմից: Վերացնել գյուղում պիոներական բազաները:

### 2.

Կոլեկտիվները գյուղում, ինչպես և քաղաքում գլխավոր ուշադրությունը պետք է դարձնեն ուսման վորակին, գիտակցական դիսցիպլինայի համար տարվող պայքարին, կազմակերպելով սոցմրցում դպրոցականների միջև: Կոլեկտիվի նպատակն է լինելու իրացնել ուսումնական պլանը (դասացուցակ) մաքրություն սահմանել, կանոնավոր բաշխել և օգտագործել դասագրքերը, տետրերը և մատիտները, կոլխոզներին կից արհեստանոցներ կազմակերպել՝ հագուստի և կոշիկների վերանորոգման համար, դպրոցում տաք նախաճաշ կազմակերպել: Պայքարել անկանոն հաճախումների, ուսումնական աշխատանքի ժամերին դպրոցից կտրվելու դեմ՝ կոլխոզի աշխատանքների պատճառով:

### 3.

Պիոներների միջև քաղ-դաստիարակչական աշխատանքներ տանելու գործում հատուկ ուշադրություն դարձնել.

ա) յերեխաների մեջ դաստիարակել ատելություն դեպի դասակարգային թշնամին, զարգացնել կոլեկտիվիզմ, անկեղծ ու հոգատար վերաբերմունք դեպի կոլխոզի ու դպրոցի գույքը.

բ) պիոներներին ծանոթացնել կոլխոզ շինարարության նվաճումներին ու դժվարություններին, դասակարգային պայքարի փաստերին, կարևորագույն օրենքներին ու վորոշումներին, ողնություն ցույց տալով կուսակցական ու կոմյերիտական բջիջներին՝ հայտաբերելու պետությունից հացը թաքցնողներին, սերմֆոնդերը վատնողներին, կոլխոզի հացն ու գույքը հափշտակողներին, սպեկուլյանտներին ու լոդրներին:

գ) իրացնել պիոներական օրենքը— «պիոներն օրինակ է բոլոր յերեխաներին», դաստիարակելով պիոներին ազգային գժտության, անկուլտուրականության, կրոնական սովորույթների ու նախապաշարմունքների, ծխելու, հայհոյանքի, ղումարբազության դեմ, պատվաստելով կուլտուրական հանգստի ունակություններ— գրքի, լրագրի ընթերցում, ռադիոյի ունկնդրում, մաքրություն ու կանոնավորություն: Ողակն ու կոլեկտիվն իրենց հավաքույթներում և պատի թերթում ցուցահանելու յեն օրինակելի պիոներներին, նաև նրանց, վորոնք չեն կատարում այս օրենքը:

Հանձնարարել ՄԿԿ Կ. բյուրոյին՝ ԻԶՈԳԻԶԻ (կերպարվեստային պետական հրատարակչություն) հետ միասին վոչ ուշ փետրվար ամսից հրատարակել մի շարք պլակատներ, վորոնք գործողություններով պատկերացնեն «պիոների առաջավոր դերը» գործնականում:

### 4.

Կոլեկտիվին կից՝ ըստ յերեխաների հետաքրքրության կազմակերպել սիրողների խմբեր՝ տրակտորիստների, ճագարաբույծների, նորագույն տեխնիկական կուլտուրաների ուսումնասիրության, բնական հարստությունների հետազոտման և տեխնիկայի այլ ճյուղերի վերաբերյալ: Այս աշխատանքի մեջ ներգրավել գյուղատնտեսներին, ուսուցիչներին, տրակտորիստներին, փորձված կոլտնտեսականներին:

### 5.

Կոլեկտիվում կազմակերպել ֆիզկուլտ պարապմունքներ— բացօթյա խաղեր, զբոսանքներ, չմշկախաղ, դահուկախաղ, յուրաքանչյուր կոլեկտիվին կից դպրոցի հետ միասին ֆիզկուլտ հրապարակներ կազմակերպելով: Կոլեկտիվում անցկացնել ռազմա-սպորտային խաղեր, մեծ յերեխաներից՝ հրաձգային խմբակներ, տոպոգրաֆային (տեղագրական), սիգնալիզացիայի (պայմանանշաններ), առաջին օգնության պարապմունքներ, պատմվածքներ Կարմիր Բանակի հերոսական արարքների, առանձին հերոսների մասին, յերեխաների մեջ սեր առաջացնելով դեպի Կարմիր Բանակը, նրա հրամանատարները,— այս աշխատանքներում ներգրավելով ՊԱԶԸ-Ավիաքիմի բջիջներին, կարմիր պարտիզաններին, քաղաքացիական կռիվների մասնակիցներին, զորացրված բանակայիններին:

Հարց հարուցել ՖԳԽ (Ֆիզկուլտ Գերագ. Խորհ.) առաջ՝ ավելացնելու բյուջետային հատկացումները գյուղում յերեխաների միջև ռազմա-ֆիզկուլտուրային աշխատանքների համար, նրանց սպորտիվ գույքով ապահովելու մասին: Հանձնարարել Մ.Կ.Կ. Կ. Բյուրոյին ՖԳԽ և Պ.-Ավիաքիմի Կ. Խ. հետ միասին մինչև փետր. 1-ը միջոցառումներ մշակել գյուղական ֆիզկուլտ կադրեր, ֆիզկուլտի և ռազմա-քաղաքական դաստիարակության ծրագրեր ու պիեսներ պատրաստելու:

### 6.

Վնասակար համարելով ողակային և կոլեկտիվ հավաքույթները ժողովների վերածելը՝ նախագահության ընտրությամբ, արձանագրություններով, բանաձևերով, կազմակերպել ողակների ու կոլեկտիվների [illegible] հավաքույթներ, վորոնց յերեխաների հետաքրքրությունների հիման վրա լայն կերպով կիրառվեն յերգերն ու խաղերը, պարեր, ռազմա-ֆիզկուլտուրային պարապմունքներ, գեղարվեստական գրականության ընթերցում, ողակային յելույթներ առանձին պիոներների ու խմբակների յելույթներ՝ ցուցադրելով նրանց աշխատանքների արդյունքը: Կոլեկտիվի վորոշ աշ-

խատանքն այնպես է կառուցվելու, վորպեսզի իրենք պիոներները նախաձեռնեն, կազմակերպեն ու հաշվառման յենթարկեն իրենց աշխատանքները՝ ջոկավարի ղեկավարությամբ:

## 7.

Գյուղական պիոներների ու յերեխաների կուլտուրական սպասարկումն ուժեղացնելու համար պլենումն առաջարկում է Կ. Բյուրոյին՝

ա) ԼԺԿ-մասի ու նրա օրգանների հետ յուրաքանչյուր դպրոցում կազմակերպել գրադարաններ, գրքերին հատկացրած բոլոր միջոցների 25 տոկոսն հատկացնելով գրադարաններին, խրճիթ-ընթերցարաններին ու ակումբներին՝ մանկական գրքերի, լրագրերի ու ամսագրերի համար:

բ) Սայուզկինոյին— յուրաքանչյուր շրջանում առանձնացնել առնվազն մեկ շրջիկ կինո՝ հատկապես յերեխաների սպասարկման համար, և ամեն անգամ, շրջագայությունների ընթացքում հատուկ մանկական կինոսեանսներ կազմակերպել:

գ) Համամիութենական ռադիո-հաղորդման կոմիտեյին— ռադիո հանգույցներ ունեցող շրջաններում կազմակերպել մանկական ռադիո-հաղորդումներ, հաթայթելով ռադիո-ապարատուրա գյուղական կոլեկտիվներին ու դպրոցներին:

դ) մանկական բոլոր էքսկուրսիոն-տուրիստական կայաններին՝ իրենց կողմից սպասարկվող յերեխաների 50 տոկոսի չափով ընդգրկել գյուղական պիոներներին. մանկական էքսկուրսիոն բազային՝ արձակուրդների ընթացքում, սկսած 1933 թ. հունվար ամսից 50—70 հարվածային գյուղական պիոներների էքսկուրսիաներ կազմակերպել՝ Մոսկվա:

ե) Գեղարվ. դաստիարակության կենտրոնական տանը—2 դեկադի ընթացքում մշակել միջոցառումներ՝ գյուղական պիոներներին և դպրոցներին յերաժշտական, խմբերգային, դրամատիկական և ԻԶՕ աշխատանքների կազմակերպման օժանդակության ուղղությամբ:

զ) Խնդրել ԼԺԿ-ին՝ ցուցմունքներ տալ կուլակների տները մանկական ակումբների համար օգտագործելու, գյուղերում ակումբներն ու խրճիթները մանուկների կուլտուրական պահանջներին սպասարկելու համար: Առանձին օրեր հատկացնել մանուկների համար ցերեկույթներ, գրքի, լրագրի և ռադիոյի ունկնդրումների համար:

## 8.

Քաղաքի պիոներների օգնությունը՝ գյուղական պիոներներին և դըպրոցներին ապահովելու ցամար անհրաժեշտ համարել, վորպեսզի քաղաքի կոլեկտիվներն ու դպրոցները, մանկական թատրոններն ու ակումբները, կուլտուրայի տներն ու գեղդաստիարակության տները, գրադարաններն ու տեխնիկական կայանները՝ կուլտուրական շեֆություն վերցնեն գյուղական կոլեկտիվների ու դպրոցների վրա, քաղաք հրավիրեն գյուղական պիոներներին, կազմակերպելով փորձի փոխանակումը, էքսկուրսիաներ դեպի գործարանները, թանգարանները: Արձակուրդներին լավագույն մեծահասակ պիոներներից բրիգադային այցելություններ կազմակերպել դեպի գյուղերը՝ նվերներով: Լենինգրադի, Ուկրաինայի և Իվանովի օրինակներով կուլտուրական շեֆություն սահմանել ազգային ծայրամասերի գյուղական կազմակերպությունների վրա:

## 9.

Ընդունելով, վոր գյուղական պիոներական կազմակերպությունների աշխատանքների ուժեղացումը ներկա շրջանում ղեկավարության հիմ-



նական խնդիրն է հանդիսանում, պլենումն առաջարկում է.

ա) ՄԿԿ Կ բյուրոյին և մարզային, յերկրային ու հանրապետական բյուրոներին՝ աշխատակիցների առկա կազմից առանձնացնել հատուկ գյուղական հրահանգիչներ և նախագահի տեղակալներին պարտավորեցնել գյուղական պիոներկոլեկտիվների պրակտիկ ղեկավարությունը.

բ) Պիոներական բյուրոները պետք է ստուգեն մեկնող ընկերների պրակտիկ օգնությունը գյուղական կոլեկտիվներին, շրջանի և մարզի աշխատակիցների 5-7 օրյա աշխատանք սահմանեն կոլեկտիվներում, պարտավորեցնելով այդ աշխատակիցներին ոգնելու հավաքույթներ անցկացնելու, պիոներակտիվի և կոլվարների հրահանգման գործում.

գ) Առնվազն ամիսը մեկ անգամ շրջբյուրոն անցկացնում կոլվարների շրջանային և փնջային (կուստավոյ) յերգեր):
հրահանգչական խորհրդակցություններ—կոլեկտիվի աշխատանքների առանձին բնագավառների համաձայն (ինստրուկտիվ զրույցներ, նոր խաղեր

Մանկկոմշարժման մարզային տներին, տեղական և կենտրոնական ինստիտուտին՝ բանավոր և գրավոր կոնսուլտացիա կազմակերպել կոլվարների համար՝ նրանց աշխատանքների կոնկրետ խնդիրների վերաբերմամբ:

դ) Շրջբյուրոներին՝ պիոներ ակտիվի հետ աշխատանքներ կազմակերպել. պարբերաբար հավաքել պիոներներին և ողակավարներին, վորոնք հետաքրքրվում են և զբաղվում աշխատանքի տարբեր բնագավառներով, ներգրավել պիոներ ակտիվին՝ հատկապես պիոներ-կոմյերիտականներին շրջբյուրոների աշխատանքներում:

ե) ՄԿԿ բյուրոների բոլոր աշխատակիցներին պարտադրել իր ժամանակին պատասխանել կոլվարների ու պիոներների նամակներին ու դիմումներին, պրակտիկ օգնություն ցույց տալով նամակներում առաջադրած հարցերի ուղղությամբ:

զ) ՄԿԿ մարզային, յերկրային և հանրապետական բյուրոներին՝ պիոներ աշխատանքների համար միջոցները բաշխելիս ավելացնել գյուղական պիոներկոլեկտիվների կարիքների սպասարկման հատկացումները:

## ՀԱՄ ԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻՆ ԿԻՑ ՄԱՆԿ. ԿՈՄ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ԲՅՈՒՐՈՅԻ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ—ԸՆԴՅՈՒՆՎԱԾ ԸՆԿ. ԻՎԱՆՈՎԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ.—

### «ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

Ընդունած ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ՀԱՄԼԿՅԵՄ ԿԿ ուղղակի և վճռական ցուցմունքներին մանկ. կոմ. շարժման կադրերի մասին, այս բնագավառում ցուցադրությունն ուղղակի անբավարար է:

Կենտ. Բյուրոյի պլենումը՝ կադրերի ուժեղացման, ղեկավարների ուսուցման ու աշխատանքի բարելավման գործում կուս-կոմյերիտական դիրեկտիվների իրագործման նպատակով վորոշում է.

1. Ղեկավար (Вожатый) ընտրվում է՝ արտադրության մեջ կամ կոլխոզում աշխատող կոմյերիտական հարվածայինը, վոչ պակաս 18 տարեկանից, համապատասխան քաղպատրաստությամբ, քաղաքում և արդյունաբերական չրջաններում 7-ամյակից վոչ պակաս, գյուղատնտեսական չրջաններում 4-ամյակից վոչ պակաս կրթությամբ:

Այսուհետև մինչև աշխատանքների անցնելը պետք է ձեռք բերի վոչ պակաս մեկամսյա տևողությամբ նախնական պատրաստություն:

Կոմյերիտմիության բջիջներին ու ՄԿԿ չրջբյուրոները ղեկավարին օգնելու նպատակով պետք է պիոներ-կոմյերիտականներից ընտրված ոգնականների հետ մշտական աշխատանք կազմակերպեն.

Պարտադրել չրջբյուրոներին կոլվարական աշխատանքի համար առաջադրված կոմյերիտականներին տալ նախնական պատրաստություն հետևյալ ծավալով.

ա) պատկերացում դպրոցական ծրագրի և ուսումնական պրոցեսի մասին.

բ) ծանոթություն պիոներ-կազմակերպության կազմակերպչական կառուցվածքի և տարրական գաղափար Մանկ. կոմ. շարժման պատմության մասին.

գ) պիոներ կոլեկտիվի աշխատանքի մեթոդիկան ու պրակտիկան (կենդանի, հետաքրքրական ձևով անցկացնել կոլեկտիվի, ոգակի հավաքույթը):

դ) զրույցներ անցկացնել հիմնական քաղաքական խնդիրների ու ընթացիկ քաղաքական դեպքերի մասին.

ե) տարբեր տարիքի յերեխաների տարիքային առանձնահատկությունների ծանոթանալու մասին:

զ) գիտելիքներ ռազմական աշխատանքների՝ հակաօդային պաշտպանության, տեղագրության (տոպոգրաֆիա), կապի, սիգնալիզացիայի մասին, կազմակերպել ռազմական խաղեր յերեխաների հետ:

յե) մոտ 9-10 յերգեր, նույնքան խաղեր: Ուսումնասիրել չափահասների ու մանկական գեղարվեստական գրականությունը: Այսպիսով կոմյերիտականներից պատրաստելով փորձված ղեկավար ու կազմակերպել, վորը հմտորեն ու ճշտությամբ կկարողանա աշխատանք տանել յերեխաների հետ, կազմակերպելով նրանց պայքարը գիտելիքների համար, ապահովելով նրանց աճող քաղաքական պահանջները:

Պարտադրել ՄԿԿ բոլոր չրջ. և քաղ. բյուրոներին պարգևատրում ու խրախուսանք սահմանել կոլեկտիվների ոգակավարների բազաների լավագույն ղեկավարներին (միջոցներ տրամադրել, հանգստի տուն գործուղել, տապ քաշել, վերհանել մամուլում, հնարավորություն տալ ուսումը շարունակելու և այլն):

2. ՄԿԿ բոլոր բյուրոներին՝ իրագործել ՀԱՄԿ(բ)Կ ԿԿ ցուցմունքները՝ պիոներ ղեկավարների համար բոլոր կուս. կաբինետներին կից մշտական սեմինարներ կազմակերպելու մասին: Գյուղատնտեսական վայրերում կիրառել փնջային սեմինարների սիստեմը, արդյունաբերական վայրերում սեմինարներ կազմակերպել խոշոր դպրոցներին կից:

3. Ապահովել ընթացիկ տարում մի շարք գրքերի հրատարակությունը — քաղաքի և գյուղի ղեկավար աշխատողի ուղեցույց, ՄԿ Շարժման մարզային դպրոցների համար դասագրքեր, ղեկավարների համար մանկավարժության ու մանկաբանության ձեռնարկներ, նույնպես և ղեկավարների համար ինքնազարգացման ու սեմինարների ձեռնարկումներ:

4. Վերակառուցել «Вожатый» ամսագիրն այն ուղղությամբ, վոր նրա հիմնական խնդիրը դառնա պիոներ կոլեկտիվի և ոգակի աշխատանքի մեթոդիկան:

5. Առաջարկել հանրապետական, մարզային և յերկրային բյուրոներին լուսբաժինների հետ միասին վոչ ուշ ս. թ. փետրվարի մեկից հիմնել պիոներ-աշխատողների յերկրային տեղական դպրոցներ, դասատուների մշտական կադրով, այն հաշվով, վոր 1933 թ. ընթացքում պատրաստվեն ու վերապատրաստվեն քաղ. և չրջբյուրոների աշխատողներն ու բոլոր պիոներ-կոլվարները:

Միջռայոնական դպրոցները պետք է պատրաստեն՝ կոլեկտիվի, բազաների ու հոկտեմբերիկների խմբակների ղեկավարներ:

Յերկրային, մարզային ու հանրապետական դպրոցները պատրաստում են գյուղատնտեսական ու արդյունաբերական չրջանների չրջբյուրոների նախագահներ ու հրահանգիչներ և կոմյերիտական մանկավարժներից ու փորձված պիոներ աշխատողներից՝ հրահանգչական-մեթոդական կադրեր:

Հանձնարարել ՄԿ Շարժման ինստիտուտին և կենտրոնական դպրոցին մինչև ս. թ. փետրվարի մեկը մշակել մարզային դպրոցների ուսումնական պլաններն ու ծրագրերը:

6. Պլենումն առաջարկում է՝ չրջբյուրոների լավագույն նախագահներին ամրացնել իրենց աշխատանքին վոչ պակաս 2 տարի ժամանակով:

Շրջանային աշխատողների և բազավարների վորակի բարձրացման միջոցները —

ա) կուս-կոմյերիտական ակտիվի մարքս-լենինյան պատրաստության ընդհանուր սիստեմում ներգրավելը:

բ) ուսուցչական մեթոդ-կոնֆերանսներին ու սեմինարներին պարտադիր մասնակցություն.

գ) հատուկ կարճատև սեմինարներ ՄԿՇ մարզային, յերկրային ու հանրապետական տների կից: ՄԿ Շարժման ինստիտուտին՝ մինչև փետրվար մշակել այս սեմինարների ուսպլաններն ու ծրագրերը:

7. Մարզային, հանրապետական, յերկրային ու քաղաքային բյուրոների

Арм.
3-5321 a
92

աշխատողների՝ դասախոսական, դասատուական կազմն ու մարզային-յերկրային տների մեթոդաշխատողների պատրաստությունը կենտրոնացնել պիոներ-աշխատողների կենտրոնական բարձրագույն դպրոցում:

Խնդրել ՀԱՄԿ(բ)Կ Կենտկոմի կուլտպրոպին մանկավարժական ԲՈՒՀ-երն (մանկավարժական-մանկավարժական բաժին) ավարտող կոմունիստ ուսանողներից ընթացիկ տարում զատել 200 անձ, յերկրային, մարզային ու հանրապետական դպրոցներում դասատուական աշխատանքներ տանելու համար:

8. Կոլվարներին ցույց տրվող մեթոդական ոգնությունն ուժեղացնելու համար առաջավոր բոլոր շրջբյուրոներին 1933 թ. ընթացքում ստեղծել շրջանային մեթոդ-կենտրոններ (կաբինետ, ղեկավարի սենյակ, ՄԿՇ տուն). խնդրել դաշնակից հանրապետությունների ԼԺԿ-ներին ցուցմունքներ տալ լուսբաժիններին՝ մեթոդաշխատանքների միջոցներով ու մանկական կադրերով ապահովելու վերոհիշյալը:

ՄԿՇ կենտրոնական դիտա-հետազոտական ինստիտուտին՝ մշակել շրջանային մեթոդկենտրոնների աշխատանքների բովանդակությունն ու ձեվերը:

9. Արտադպրոցական աշխատողների կադրերի պատրաստումը պետք է տարվի ԼԺԿ-մասների սիստեմում գտնվող համապատասխան ճյուղային տեխնիկումներում և ինստիտուտներում արտադպրոցական աշխատողներ պատրաստող բաժինների կազմակերպումով (կինո, թատրոն, տեխն. և ագրոտեխնիկ պրոպագանդա, եքսկուրսիոն կայաններ).

Այս կապակցությամբ՝ ՄԿԿ բոլոր բյուրոներին՝ լուսբաժինների որգանների հետ միասին նախագծել հիշյալ բաժանմունքների ծավալումը 1933 թ.



10. Պլենումը պահանջում է ՌՍՖԽՀ Լուսժողկոմատից և բոլոր լուսբաժիններից.

ա) նշած բոլոր միջոցառումների սիստեմն ապահովել մանկավարժ ուժերով, միջոցներով, շենքերով և ուսպիտույքներով.

բ) իրագործել կոլվարների մանկավարժական աշխատանքի առաջ քաշելու միջոցառումների սիստեմը (նախապատրաստական դասընթացներ և այլն).

գ) ուսուցչական կոնֆերանսների պլաններում ապահովել պիոներ շարժման կոնկրետ խնդիրներ.

դ) կոլվարներին հայթհայթել գրականություն՝ ուսուցիչներին հավասար.

ե) Մանկկոմ շարժման դասընթաց մտցնել բոլոր մանկավարժական հիմնարկների ուսպլաններում:

Պլենումը պահանջում է պրոֆմիութենական կազմակերպություններից:

ա) ապահովել կոլվարի աշխատանքներն առաջին հերթին. պրոֆմիությունների նախահաշվում միջոցներ մտցել ՄԿՇ կադրերի պատրաստման համար:

բ) հանգստի տներում և սանատորիաներում տեղեր առանձնացնել կոլվարների ու բազավարների համար և նրանց առողջացման բազաների հատուկ շինարարություն կազմակերպել.

գ) կոլվար-բազավարին ոգնելու գործում ներգրավել բանվորներին ու մասնագետներին.

ՄԿԿ Կ. բյուրոյի պլենումն ընդգծում է կոլվարի աշխատանքներում նրան ոգնելու և հոգատար վերաբերմունքի սուր անհրաժեշտությունն ու առորյա իսկական ուսուցման կազմակերպումը:

ԳԼԱՎԼԻՏ № 6

Г.П.Б. в Лнгр.
A. 1938 г.
Ак. №

ՀՀ Ազգային գրադարան
NL0037306

3-532/a

30/IX 91